ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կինյան փողոց h.22 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համբարձում Նիկոլայի Կարապետյանը ծնվել է 1927 թվականի հոկտեմբերի 2-ին։

Հ. Կարապետյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։

1954 թվականին եղել է ՍՄԿԿ անդամ։

1957-1961 թթ. եղել է Հայպետհրատի քաղաքական գրականության խմբագրության վարիչ։

1969 թվականին Հ.Կարապետյանին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի կոչում։

1973 թվականին Համբարձում Նիկոլայի Կարապետյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում։

1976 թվականից ղեկավարել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ՍՄԿԿ պատմության ամբիոնը։ Զբաղվել է ՍՄԿԿ, կոմերտմիության և հայ հասարակական մտքի պատմության հարցերով։

Հ. Կարապետյանը հեղինակ է մի շարք գրքերի։

Հ. Կարապետյանը մահացել է 2004 թվականին։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Նիկոլայի Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Կիևյան փողոց հ.22 հասցեում (որտեղ շուրջ 61 տարի ապրել է պատմաբանը) տեղադրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Էդուարդ Սիմոնյանի կողմից։

Հաշվի առնելով Համբարձում Նիկոլայի Կարապետյանի գիտական և մանկավարժական բազմամյա գործունեությունը և մեծ վաստակը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համբարձում Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համբարձում Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համբարձում Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ